ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2018թ. մարտի 27 N 33-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԱՊԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔԸ ՆԱՐԵԿ ՏԻՏԱՆԻ ՎԱՆԵՍՅԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՆՓՈՓՈԽ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2011 թվականի դեկտեմբերի 20-ի N 136-Ն որոշմամբ հաստատված կարգի 69-րդ կետի 1-ին ենթակետը, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2018 թվականի մարտի 21-ի N 33-Ա կարգադրությամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Ապարանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնի համար անցկացված մրցույթի արդյունքների վերաբերյալ բողոքը քննող հանձնաժողովի 2018 թվականի մարտի 26-ի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Ապարանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնի համար 2018 թվականի մարտի 20-ին անցկացված մրցույթի արդյունքը Նարեկ Վանեսյանի վերաբերյալ թողնել անփոփոխ:

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ